

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՅԻ
ԾՆՆԴԵԱՆ 70ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

(Արտասանուած՝ Կիրովականի մէջ, 27 Սեպտ. 1967ին)

Նախ Սփիւռքի հայութեան ջերմագին ողջունը՝ հայրենի հողի վրայ ապրող յաւերժական հայութեան, ապա առաջնոյն խանդավառալից զարգացման հաւատովքը առ Եղիշէ Զարենյ, հօգորդոյն բանաստեղծին, որ ընդմէջ քաղցրահունչ քնարականութեան եւ փոթորկածայն զիւցաղներգութեան՝ ցեղին սիրտը մարմնաւորեց, համամարդկային լայն շունչով մը շաղախուած:

Շնորհակալութիւն՝ բանաստեղծին ծննդեան 70ամեակի առթիւ, այս մեծ հանդիսութիւնը կազմակերպող պաշտօնական մարմինն, որ հրաւիրեց մեզ եւս, որպէսզի մեր համեատ ձայնը միացնէինք հայրենաբնակ հայ մարդուն սրտէն, հայրենական ձորերէն եւ լեռներէն լիարուսն բարձրացող ա՛յն ձայնին՝ որով այսօր մեր ազգին արժանաւոր դաւաններէն մին է ի պատուի, յանձին Եղիշէ Զարենյի, ծնեալ Սողոմոնեան:

Մեր նպատակը չէ բանաստեղծին կեանքն ու դործը վերլուծել. ատոր համար, քաջատեղեակ ենք, վախազկեցիկ մասնադէտներ կան՝ հայրենական ամէն անկիւններուն, այլ մերձենալ անոր մէջ ապրող մարդուն, ըսել կ'ուզենք ստեղծագործողին մէջ քարաժայռի մը նման անխախտ կանգնած անձնաւորութեան, որ իր բարոյական խղճմանքի հօր շունչովը պայմանաւորեց բանաստեղծին գրականութեան եղականութիւնը՝ այլադանութեան մէջ:

Այս դրեղ անհատականութիւնն է, որ բանաստեղծին քերթողութեան մէջ բացայայտ նշմարելի կ'ընէ համամարդկային, ազգային, պաշտօնական եւ պաշտօնաբարձական շէշտը՝ պղինձի պսակովներով շրջուցիչ, երկաթակուռ բառերու, արտայայտութեանց եւ աստեղծանքի զանգուածներովը քանդակել:

Անշեղ նկարագիր մը՝ հպարտ խառնուածքի մը մէջ. յարատեւօրէն ինքն իր մէջ բորբոքող արութիւն մը, որ կ'երգէ բարձր, անվախ եւ թելադրական, ու հո՛ս է Եղիշէ Զարենյի մշակած գրականութեան սիրագործութիւնը, բունն ու արմատը՝ իր մարդկային եւ քերթողական մեծութեան. — հայորդական, գունազեղ, հոգեբանական թափանցումներով լի եւ գրչապայքարի կատարութեամբ սանձարձակ:

Իր բանաստեղծական խառնուածքին ամենհի մոլեգնութիւնը ի յայտ կու գայ ստեղծագործական աշխատանքի առաջին տողէն իսկ. առաջին տողէն իսկ կ'ոտնու բանաստեղծութեան մէջ, առաջ ընթանալով հեղեղի նման, որու վրայ ներշնչումը իր կարգին կը թեւածէ բարձրագոյն ոլորտներով, առաջաստիճանը պարզած կենսախայտ հոգմերու մէջ:

Միեւնոյն քերթուածին մէջ շատ յաճախ կու գան խմբաւորուիլ քնա-

րականը, զիւցաղականը, երգիծականը եւ հետադարձական կիրքն ու տենդը, մեղի յիշեցնելով Պայրընը, Հիւկոն, Պուշկինն ու Տ'Աննուեյիոն:

Ա՛յնքան վառ է իր մէջ կեանքը, կենդանի՝ մտածումն ու զգացումը, որ հակադրութեան օրէնքով, կը նախասիրէ քնքշազիր քերթողները, — Մեծարենյ, Տէրեան, Սայեաթ-Նովա, յար եւ նման Պայրընին՝ որ կը նախընտրէր Շէլլը, Հիւկոն՝ որ մոտցած զինք շրջապատող վիպաշունչ քերթողներուն պառնասը՝ իր ուշադրութիւնը կը կեդրոնացնէր Պոտլէրի վրայ, զայն անուանելով «նորագոյն սարսուռ»:

Բանաստեղծին խառնուածքը կը կենդանացնէ անոր քերթողութիւնը, որու մէջ, զգացումները ի մի շաղախեալ պաշտօնաբերին եւ մտածողութեան՝ կը շարժին առաջ, կրակէ մթնոլորտի մը մէջ, մեր առջեւ պատկերաւորելով լեռնէն թաւալող հեղեղը, որու մէջ քարերը կը դարնուին իրարու, ձայնէն, յար եւ նման անոր զործածած արույրէ բառերուն, որոնք իրենց կարգին ապրում-զարգացման ուրախութիւնն ու շարժարանքը կը վերապրին:

Շատ յաճախ բնութեան հանդէպ իր տածած սէրը դերագոյն աստիճաններու կը հասնի, հոս ու հոն տեսանողի փայլատակումներով հրահրեալ, որոնք վեհութեամբ եւ խորութեամբ կը շփոթազարդեն իր ազնիւ երկունքը, միաժամանակ ստեղծելով՝ չես գիտեր ի՞նչ զիւթական շարժում-զործողութեան մը լարումութիւնը, լիովին իր ուռկանին մէջ առնելով ընթերցողը:

Եղիշէ Զարենյ եղաւ նաեւ իր ժամանակին մեծ քերթողներէն մին՝ դասակարգային եւ պաշտօնաբարձական դեմքի վրայ, նման Վլատիմիր Մալախովսկիին, որու արձանը տեսանք բարձրացած Մոսկուայի մէջ, ոչ շատ հեռու Պուշկինի եւ Կորքիի արձաններէն, ու ճիշտ է եւ արդար՝ որ Նրեւանի մէջ բարձրանալ արձանը Եղիշէ Զարենյի, ընդմէջ իրեն, Թումանեանի եւ Արուսեանի՝ նետելով պաշտօնական այն կամուրջը, որու կամարներուն տակ շառաչեն բոլորիս սրտերէն բարձրացող, հայր հայուն միացնող սիրազեղ հրաւերն ու կոչը, հայրենի աշխարհէն մինչեւ ի սփիւռս աշխարհի:

Չկրցանք, ի հեճուկս մեր խոստման, մեր առաջադրութիւնը յարգել, մասամբ կեդրոնանալով Եղ. Զարենյի ստեղծագործական երկունքին մի քանի առանձնաշատկութեանց վրայ, եւ տարբեր չէր կրնար ալ ըլլալ, քանի որ բանաստեղծը լափլիզող է, գերող, ու չէ՛ կարելի չի.յնալ իրմէ առաջացող բազմաձայնութիւններով մեծահարուստ համերգութեանց յորձանուտին մէջ. — կատարեալ կախարդական որդայթ մը:

Մեր խօսքը կը վերջացնենք մեր սքանչացումը յայտնելով հայրենի բնութեանական տեսարաններուն գեղեցկագոյնին եւ իմաստնադոյնին, որ այս պարագային ո՛չ գոյգ Մասիաներն են, ո՛չ Արաքս-Արաղած եւ ոչ ալ Սեւանայ լիճը, այլ այս յարկին տակ ամբոխուած մարդկային զանգուածը, որ մարմիններու ամբոխում մը ըլլալէ աւելի՝ հոգիներու եւ իմացութեանց հոյակապ համայնապատկեր մըն է, մէկտեղուած՝ ի սէր եւ ի յարգանս մեր ազգին մեծ զաւակներէն մէկուն, Եղիշէ Զարենյի, ծնեալ Սողոմոնեան:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ